



## «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա.Առաքելյան 10

ԷԿԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության Տնօրենների Խորհրդի կողմից  
ընդունված որոշումները

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2010թ-ի օգոստոսի 20-ին կայացած Տնօրենների Խորհրդի նիստում որոշում է կայացվել սովորական անվանական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման և տեղաբաշխման մասին, ինչպես նաև այլ օրակարգային հարցերի շրջանակում:

Ստորև ներկայացվում են Տնօրենների Խորհրդի ընդունված որոշումները:

Ա.Թևոյան

Տնօրենների Խորհրդի նախագահ

\_\_\_\_\_ (ստորագրություն)

23.08.2010թ.

**«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների Խորհրդի կողմից ընդունված որոշումները**

1. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների Խորհրդի նախագահի ընտրություն:  
«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների Խորհրդի նախագահ ընտրվեց Սպարտակ Թևոյանը:
2. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների Խորհրդի քարտուղարի ընտրություն:  
«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ Խորհրդի քարտուղար ընտրվեց Ինեսա Գրիգորյանը:



3. Հաստատել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ «Գլխավոր տնօրենի մասին կանոնակարգ»-ը:
4. Հաստատել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ «Կորպորատիվ քարտուղարի մասին կանոնակարգ»-ը:
5. Հաստատել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ «Ներքին (ինսայդերական) տեղեկությունների մասին կանոնակարգ»-ը:
6. Հաստատել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ «Տեղեկատվական քաղաքականության մասին կանոնակարգ»-ը:
7. Հաստատել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ ««Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության համար իրականացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին կանոնակարգ»-ը:
8. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ Գլխավոր Տնօրենի նշանակում:  
«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ Գլխավոր Տնօրեն նշանակվեց Վահրամ Բեգլարյանը:
9. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ Կորպորատիվ քարտուղարի նշանակում:  
«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ Կորպորատիվ քարտուղար նշանակվեց Ինեսա Գրիգորյանը:
10. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ կողմից սովորական անվանական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման և տեղաբաշխման մասին հարցի քննարկում:  
Սույն հարցի շրջանակում Խորհուրդ որոշեց՝  
ա) լրացուցիչ տեղաբաշխել 1,400,000,000 (մեկ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ ծավալով 1,400,000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) հատ, 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային սովորական անվանական բաժնետոմսեր,  
բ) հաստատել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման պայմանները,  
գ) բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում ապահովել բաժնետոմսերի սեփականատերերի բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառումը,  
դ) Հանձնարարել «ԱՐՅԱՄ ՀԷԿ» ԲԲԸ Գլխավոր տնօրենին ապահովել բաժնետոմսերի տեղաբաշխման նախապատրաստական աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի («ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ) հետ «ԱՐՅԱՄ ՀԷԿ» ԲԲԸ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով համապատասխան պայմանագրի կնքումը, բաժնետոմսերի ազդագրի մշակումը և ՀՀ կենտրոնական բանկում օրենքով սահմանված կարգով գրանցումը, տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեղաբաշխմանն առնչվող այլ գործողությունների իրականացումը: